ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«17» 09 2025թ.
№ 41ԼՄՊ/1488

«Արման Գաբրիելյան Վահանի» Ա/Ձ
ՀՎՀՀ 23249427
ՀՀ, ք. Երևան, Սարի թաղ. 5շ. 73/1տ
հեռ. +37455333311
էլ. հասցեն՝ arm.production@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և անհատ ձեռնարկատեր Արման Գաբրիելյան Վահանի (այսուհետև՝ Կազմակերպություն) միջև 06.05.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/5-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 16.06.2025թ. կնքված N 1 Համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում Կազմակերպությունը ապրանքների մի մասով՝ մինչև 20.08.2025թ., իսկ մյուս մասով՝ համաձայնագրի կնքումից հետո մինչև 150 օրացույցային օրվա ընթացքում պետք է մատակարարեր ապրանքներ՝ 34-րդ և 57-րդ չափաբաժինների մասով, սակայն Կազմակերպությունը հրաժարվել է վերոնշյալ բոլոր չափաբաժինների մասով ապրանքների մատակարարումից:

Հիմք ընդունելով Պայմանագրի 6.3 կետը (Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարարելու դեպքում) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. սեպտեմբերի 17-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը և N 1 Համաձայնագիրը:

Տեղեկացնում եմ, որ Կազմակերպությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 50,987 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 1,569,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 2,353,500 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 26-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1,569,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 2,353,500 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. սեպտեմբերի 26-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Կազմակերպության միջև 06.05.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/5-6 գնման պայմանագրի 8.3 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերություններից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերով և քանակներով վերոնշյալ ապրանքներ ձեռքբերելու դեպքում Կազմակերպությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագրերը կնքվում են ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ